



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 19/21

23.08.2021թ.

ք. Երևան

ՀՀ վարչական դատարանը, նախագահությամբ դատավոր Ռ. Խանդանյանի (այսուհետ՝ Դիմող) թիվ ՎԴ/4364/05/19 վարչական գործի շրջանակներում դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը (այսուհետ՝ Սահմանադրություն) համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի՝ այնքանով, որքանով չի ներառում «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքերով քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնից ազատված անձին և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի՝ այնքանով, որքանով կենսաթոշակի բնականոն աճ չի նախատեսում, համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 28-րդ, 29-րդ և 60-րդ հոդվածներին:

Ըստ Դիմողի՝ 2014թ. հուլիսի 1-ից պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության չափը հաշվարկելու նոր մեխանիզմների ներդրմանը զուգահեռ, ներդրվեց նաև նրանց կենսաթոշակները համապատասխան բանաձևով հաշվարկելու մեխանիզմ, որը նախատեսված է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ

հողվածով և որի կիրառման արդյունքում անձանց նշանակված կենսաթոշակի չափը ամեն դեպքում ենթակա է փոփոխման, եթե փոփոխվում է այդպիսի եղանակով կենսաթոշակ հաշարկելու հիմք հանդիսացող բանաձևի տարրերից որևէ մեկը (մասնավորապես՝ նշված օրենքով կենսաթոշակի չափը հաշվարկվում է $G=Z*Q+U*U$ բանաձևով, ուստի ժամանակի ընթացքում բանաձևի տարրերից որևէ մեկի աճի դեպքում (հիմք՝ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մաս) ինքնաշխատ բարձրանում է նաև անձի կենսաթոշակի չափը՝ ի տարբերություն «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ՔնԿոմՕր) 56-րդ հոդվածով հաշվարկվող կենսաթոշակի, որը փոփոխման ենթակա չէ):

Արդյունքում ստացվում է, որ ՔնԿոմՕր 56-րդ հոդվածի հիմքով անձին նշանակված կենսաթոշակը կայուն է և ենթակա չէ փոփոխության, ինչը, սակայն, իրավաչափ չէ և հանգեցնում է անձի սահմանադրական իրավունքների խախտման, քանզի նմանատիպ իրավիճակներում գտնվող այլ անձանց համեմատ ՔնԿոմՕր 56-րդ հոդվածի հիմքով կենսաթոշակի նշանակված անձը առնվազն անբարենպաստ իրավիճակում է գտնվում՝ զրկվելով իրեն հասանելիք սեփականությունից: Մասնավորապես՝ խնդիրը կայանում է հետևյալում. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ՝ «2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև՝

1) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձին, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը.

2) «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերով հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձին.

3) հարկային ծառայության քննիչի պաշտոն զբաղեցրած անձին, որի լիազորությունները դադարել են «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը.

4) մաքսային ծառայության քննիչի պաշտոն զբաղեցրած անձին, որի լիազորությունները դադարել են «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը (...):

Վկայակոչված նորմի սուբյեկտային կազմից երեքը վերաբերելի են քննիչի պաշտոն զբաղեցրած անձին և հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձին, իսկ ՔնԿումՕր 56-րդ հոդվածի 4-րդ մասը վերաբերելի է քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնից ազատված ծառայողին: Արդյունքում ստացվում է, որ մաքսային ծառայության քննիչի պաշտոն զբաղեցրած անձին, ով ծառայությունից ազատվել է անձնական դիմումի հիման վրա («Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին մաս), հարկային ծառայության քննիչի պաշտոն զբաղեցրած անձին, ում լիազորությունները դադարել են անձնական դիմումի հիման վրա («Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) և հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձին, ում լիազորությունները դադարել են անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա («Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ) կենսաթոշակ նշանակվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, մինչդեռ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնից ազատված ծառայողին, ում լիազորությունները դադարեցվել են իր գրավոր դիմումի հիման վրա, կենսաթոշակ նշանակվում է ՔնԿումՕր սահմանված կարգով:

Ամբողջացնելով վկայակոչված կարգավորումների արդյունքում ստեղծված իրավիճակը՝ Դիմողն արձանագրում է, որ մաքսային ծառայության քննիչի պաշտոն զբաղեցրած անձին, ով ծառայությունից ազատվել է անձնական դիմումի հիման վրա, հարկային ծառայության քննիչի պաշտոն զբաղեցրած անձին, ում լիազորությունները դադարել են անձնական դիմումի հիման վրա և հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձին, ում լիազորությունները դադարել են անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա կենսաթոշակ նշանակվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական

երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով, և ըստ էության, էթե 9-րդ հոդվածի 3-րդ մասով հաշվարկված և նշանակված կենսաթոշակի չափը (որը ենթակա չէ փոփոխման, ինչպես ՔնԿոմՕր 56-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող կենսաթոշակը), առավել նվազ է քան նույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող կենսաթոշակի չափը, ապա կենսաթոշակը հաշվարկվում և վճարվում է օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով (կենսաթոշակի բնականոն աճ նախատեսվում է), մինչդեռ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնից ազատված ծառայողին, ում լիազորությունները դադարեցվել են իր գրավոր դիմումի հիման վրա, կենսաթոշակ նշանակվում է ՔնԿոմՕր 56-րդ հոդվածով սահմանված կարգով, որի արդյունքում կենսաթոշակի չափը ենթակա չէ փոփոխման և վերահաշվարկման, որպիսի տարբերակված մոտեցումը չի համապատասխանում Սահմանադրությանը:

Հետևաբար՝ քննարկվող դեպքում որևէ ողջամիտ պատճառաբանություն առկա չէ հիմնավորելու համար, թե ինչու է օրենսդիրը միևնույն հիմքով պաշտոնական լիազորությունները դադարած հարկային ծառայության, մաքսային ծառայության քննիչներին և հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձին (ներառյալ քննիչները) առավել բարնպաստ պայմաններով կենսաթոշակի իրավունք վերապահել՝ ի տարբերություն քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնից ազատված ծառայողի (ներառյալ քննիչները), որոնց սոցիալական ապահովության պայմաններն էականորեն և անհամեմատ նվազ են: Արդյունքում «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասն այնքանով, որքանով կենսաթոշակի բնականոն աճ չի նախատեսում, խաթարում է բոլորի հավասարությունն ու խտրականության արգելքի սկզբունքը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի՝ այնքանով, որքանով չի ներառում «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքերով քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնից ազատված անձին

և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի՝ այնքանով, որքանով կենսաթոշակի բնականոն աճ չի նախատեսում, համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 28-րդ, 29-րդ և 60-րդ հոդվածներին:

Վիճարկվող դրույթների բովանդակությունը հետևյալն է.

«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

3. 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև՝

1) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձին, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը.

2) «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերով հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձին.

3) հարկային ծառայության քննիչի պաշտոն զբաղեցրած անձին, որի լիազորությունները դադարել են «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը.

4) մաքսային ծառայության քննիչի պաշտոն զբաղեցրած անձին, որի լիազորությունները դադարել են «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը:

2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված այն անձանց, որոնք դատախազի կամ հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում (հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնում) նշանակվել են մինչև 2017 թվականի հունիսի 1-ը՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելուց հետո:

Սույն մասով սահմանված մասնագիտական աշխատանքային ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են Հայաստանի Հանրապետությունում դատախազի (մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը՝ դատախազի տեղակալի, դատախազի օգնականի և դատախազության գիտաուսումնական հաստատությունների՝ դասային աստիճան շնորհված աշխատողների), Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննիչի, պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի քննիչի, ազգային անվտանգության մարմիններում քննիչի, հարկային ծառայությունում քննիչի, մաքսային ծառայությունում քննիչի (ներառյալ՝ մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը՝ դատախազության քննիչի, քննչական վարչության, բաժնի կամ բաժանմունքի պետի, պետի տեղակալի), հատուկ քննչական ծառայության ծառայողի, ԽՍՀՄ դատախազության համակարգում դատախազի և քննիչի պաշտոնում աշխատած ժամանակահատվածը, Հայաստանի Հանրապետությունում և ԽՍՀՄ-ում դատավորի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամանակահատվածը:

Սույն մասով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկվում է հաշվարկային աշխատավարձի 70 տոկոսի չափով. 20 տարուց ավելի մասնագիտական աշխատանքային ստաժի յուրաքանչյուր լրիվ տարվա համար կենսաթոշակին ավելանում է հաշվարկային աշխատավարձի 2 տոկոսը, իսկ մինչև դատախազի պաշտոն զբաղեցնելը աշխատած և մասնագիտական աշխատանքային ստաժում չհաշվառվող յուրաքանչյուր տարվա համար՝ մեկ տոկոսը: Սույն մասով սահմանված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել հաշվարկային աշխատավարձի չափը:

Դատախազի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է դատախազի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դատախազի, դատավորի, դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիների համար տրվող հավելավճարի հանրագումարի) 90 տոկոսի չափով՝ հաշվի առնելով վերջին պաշտոնը, դասային աստիճանը և դատախազի, դատավորի, դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիները դատախազի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ:

Հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է հատուկ քննչական ծառայության ծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի, դասային աստիճանի համար տրվող հավելման և հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի կամ քննիչի պաշտոնում աշխատած տարիների համար տրվող հավելման հանրագումարի) և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով՝ հաշվի առնելով վերջին պաշտոնը, դասային աստիճանը և հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի կամ քննիչի պաշտոնում աշխատած տարիները հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ:

Հարկային և մաքսային ծառայություններում քննիչի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է հարկային կամ մաքսային ծառայության քննիչի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (հարկային ծառայության քննիչի համար՝ պաշտոնային դրույքաչափի, հարկային ծառայության դասային աստիճանի և հատուկ կոչումի համար տրվող հավելավճարների հանրագումարի, մաքսային ծառայության քննիչի համար՝ պաշտոնային դրույքաչափի, մաքսային ծառայության հատուկ կոչումի համար տրվող հավելավճարի հանրագումարի) և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով՝ հաշվի առնելով վերջին պաշտոնը, հատուկ կոչումը (հարկային ծառայության քննիչի դեպքում՝ նաև վերջին դասային աստիճանը) հարկային կամ մաքսային ծառայության քննիչի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ:

Հաշվարկային աշխատավարձը հաշվարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ սահմանադրական դատարանի անդամի պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկվում է «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամին, դատավորին, դատախազին, հատուկ

քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնողին (հատուկ քննչական ծառայության ծառայողին) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը նշանակված կենսաթոշակները, սույն օրենքի 9-րդ հոդվածով նշանակված կենսաթոշակները համարվում են սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն նշանակված կենսաթոշակներ և հաշվարկվում են սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հաշվի առնելով հիմնական կենսաթոշակի չափը, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անձի զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված գործակիցը և մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը:

Եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին (սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված) չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին (սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված) չափով:

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

4. Սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնից ազատված ծառայողին նշանակվում է կենսաթոշակ, եթե նա քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնում նշանակվել է սույն օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն և պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունի մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը ձեռք բերած առնվազն 20 օրացուցային տարվա ծառայության ստաժ:

Սույն մասով սահմանված ծառայության ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են զինվորական ծառայության ժամանակահատվածը և քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը:

Սույն մասով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկվում է 2014 թվականի հունիս ամսվա համար պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի և Կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննչական մարմիններում ստացած (հաշվարկված) դրամական բավարարման և սննդի

փոխհատուցման գումարի 70 տոկոսի չափով. 20 տարուց ավելի ծառայության ստաժի յուրաքանչյուր լրիվ տարվա համար կենսաթոշակին ավելանում է դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի երկու տոկոսը, իսկ մինչև զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնելը աշխատած և ծառայության ստաժում չհաշվառվող յուրաքանչյուր տարվա համար՝ մեկ տոկոսը: Սույն մասով կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի չափը: Սույն մասով սահմանված դրամական բավարարման չափը որոշվում է պաշտոնային դրույքաչափի, զինվորական կոչման դրույքաչափի, զինվորական ծառայության ստաժի համար տրվող հավելման գումարի և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով: Կենսաթոշակը նշանակելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Սույն մասով սահմանված կենսաթոշակը վճարվում է, կենսաթոշակ վճարելը դադարեցվում է, կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում և վերականգնվում է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով զինվորական կենսաթոշակների համար սահմանված կարգով:

Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ *բոլորը հավասար են օրենքի առջև:*

Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

Նկատի ունենալով, որ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասը չի ապահովում նույն խմբի անձանց համար հավասար պայմաններով կենսաթոշակի իրավունքը՝ Դիմողը գտնում է, որ այդպիսին կարող է ապահովված լինել, եթե «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում ներառված լինի նաև «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված հիմքերով քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնից ազատված անձը, այսինքն՝ վիճարկում է օրենսդրական բաց, ինչի վերաբերյալ վերլուծությունները բերենք ստորև:

Այսպես, 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է՝ «7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը: Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թ. փետրվարի 5-ի ՄԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության

շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»: Ջարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ ***երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը***: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

2014 թվականի ապրիլի 8-ի ՄԴՈ-1143 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանը փաստում է, որ «օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ ՔնԿոմՕր) 56-րդ հոդվածով կարգավորվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնից ազատված ծառայողին կենսաթոշակ նշանակելու հարաբերությունները: Նշված նորմի հասցեատերեր են ՔնԿոմՕր 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնից ազատված ծառայողները:

ՔնԿոմՕր 22-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին պաշտոնից ազատելու դեպքերը: Նշված նորմի 2-րդ կետերով սահմանվում է, որ անձը ծառայությունից ազատվում է իր գրավոր դիմումի հիման վրա:

Այսինքն՝ նշված հիմքով ծառայությունից ազատված անձանց համար կենսաթոշակ նշանակվում է ՔնԿոմՕր 56-րդ հոդվածով սահմանված հիմքով: Նշված նորմով կենսաթոշակի չափի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. 2014 թվականի հունիս ամսվա համար պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի և Կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննչական մարմիններում ստացած (հաշվարկված) դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 70 տոկոսի չափով. 20 տարուց ավելի ծառայության ստաժի յուրաքանչյուր լրիվ տարվա համար կենսաթոշակին ավելանում է դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի երկու տոկոսը, իսկ մինչև զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնելը աշխատած և ծառայության ստաժում չհաշվառվող յուրաքանչյուր տարվա համար՝ մեկ տոկոսը: Ընդ որում՝ կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի չափը: Դրամական բավարարման չափը որոշվում է պաշտոնային դրույքաչափի, զինվորական կոչման դրույքաչափի, զինվորական ծառայության ստաժի համար տրվող հավելման գումարի և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով:

Սակայն, համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում պաշտոնատար անձանց աշխատավարձը դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարներով հաշվարկելու մեխանիզմն այլևս գոյություն չունի, ինչի արդյունքում ստացվում է, որ ՔնԿոմՕր 56-րդ հոդվածի հիմքով անձանց նշանակվող կենսաթոշակի չափը անփոփոխելի է. այն կազմված է 2014 թվականի հունիս ամսվա համար ստացած (հաշվարկված) դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 70 տոկոսի չափից, հետևաբար՝ այդ կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը փոփոխման ենթակա չէ անկախ հետագայում հիմնական կենսաթոշակի չափի, մասնագիտական ստաժի, մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքի և սովորաբար կենսաթոշակի հաշվարկի հիմքում ընկած այլ հանգամանքների փոփոխությունից:

Ինչպես Դիմողն իրավացիորեն նկատել է՝ խնդիրը կայանում է նրանում, որ մինչև 01.08.2015 թվականը գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության

քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ պարբերությունը կենսաթոշակի չափի հաշվարկի հիմքում դնում էր քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում նշանակվելու ամսվան նախորդող ամսվա համար պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննչական մարմիններում ստացած դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 70 տոկոսի չափը, որը կարող էր փոփոխվել, ինչի արդյունքում կփոփոխվեր նաև կենսաթոշակի չափը, մինչդեռ ««ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-95-Ն) 1-ին հոդվածով օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվեց փոփոխություն, ինչի արդյունքում կենսաթոշակի չափը սկսեց հաշվարկվել 2014 թվականի հունիս ամսվա համար պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի և Կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննչական մարմիններում ստացած (հաշվարկված) դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 70 տոկոսի չափով: Միննույն ժամանակ, 2013 թվականի դեկտեմբերի 11-ին կատարվեցին փոփոխություններ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում (ՀՕ-121-Ն), իսկ 2014 թվականի փետրվարի 4-ին ընդունվեց «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքը (որի վերնագիրը 09.04.2018թ. ուժի մեջ մտած «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-143-Ն օրենքով շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին»), որոնց՝ 2014թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո, ներդրվեց պետական պաշտոններ զբաղեցրած անձանց կենսաթոշակների հաշվարկման նոր մեխանիզմ («Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս): Մինչ այդ, մի շարք պաշտոնատար անձանց, այդ թվում քննիչների, կենսաթոշակը հաշվարկվում էր զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարից, որոնց բարձրացումն էլ ապահովում էր կենսաթոշակի բնականոն աճը:

Այսինքն՝ սույն դեպքում գործ ունենք կենսաթոշակի իրավունքի սահմանափակման հետ, ուստի այն դիտարկենք նախ սահմանադրորեն երաշխավորված խտրականության, օրենքի առջև բոլորի հավասարության և համաչափության սկզբունքների լույսի ներքո:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով անդրադարձել է խտրականության արգելման սկզբունքին և ամրագրել հետևյալը.

Սահմանադրական դատարանը 2009 թվականի փետրվարի 24-ի ՄԴՈ-792 որոշման մեջ արձանագրել է. «5. ՀՀ Սահմանադրության 1, 3 և 14.1 հոդվածների համաձայն Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, խտրականության ամեն մի դրսևորում, այդ թվում՝ կախված հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:»:

Սահմանադրական դատարանի 2008 թվականի հունվարի 29-ի ՄԴՈ-731 որոշման մեջ նշվել է. «10. ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս հոդվածի պահանջներին համապատասխան պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները: Մինչդեռ վիճարկվող նորմերը հնարավորություն չեն տալիս այն անձանց, որոնց ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթղթերը բացակայում են, հավասարապես օգտվել այն իրավունքից, որից օգտվում են ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթուղթ ունեցող անձինք: Վիճարկվող դրույթի կիրառմամբ ձևական հիմքով (ստաժը հիմնավորող փաստաթղթերի բացակայություն) անհավասար դրություն

է ստեղծվում փաստացիորեն միևնույն ապահովագրական ստաժն ունեցող անձանց միջև:»:

Անդրադառնանք նաև Սահմանադրական դատարանի 2014 թվաանի ապրիլի 2-ի ՄԴՈ-1142 որոշմանը, համաձայն որի՝ «7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ «կենսաթոշակ» հասկացությունը որևէ ձևով ամրագրված չէ: Սակայն «սոցիալական» եզրույթը դիտարկվում է որպես պետության սոցիալական բնույթի բնութագրիչ (հոդվ.1), խտրականությունը բացառող հանգամանք (հոդվ. 14.1), աշխատողի շահի դրսևորում (հոդվ. 32), սոցիալական ապահովության իրավունքի բնութագրիչ (հոդվ. 37), պետության հիմնական խնդիրների սահմանները բնորոշող ոլորտ (հոդվ. 48), կառավարության կողմից իրականացվող քաղաքականության բնագավառ (հոդվ. 89): Բոլոր դեպքերում էականն այն է, որ իրեն նաև սոցիալական հոչակած պետությունը սահմանադրորեն որդեգրում է մարդկանց սոցիալական կյանքին առնչվող խնդիրների նկատմամբ հստակ դիրքորոշումներ: Դրանց թվում՝ սոցիալական ապահովության իրավունքը ճանաչվել է որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնական իրավունքներից մեկը և Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով պետությունը սահմանափակված է նաև այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:»:

Խտրականության ցանկացած դրսևորման արգելման սկզբունքն ամրագրված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի՝ խտրականության արգելքն ամրագրող 14-րդ հոդվածով, համաձայն որի՝ սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ *բոլորը հավասար են օրենքի առջև*: Նշվածի հիման վրա պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական

որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները: Մինչդեռ վիճարկվող նորմը հնարավորություն չի տալիս «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձանց, ովքեր ծնվել են մինչև 1974 թվականի հունվարի 1-ը, 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում օտվելու կենսաթոշակի իրավունքից, այնինչ, նույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև «Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերով հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձին, ընդ որում, նշված դեպքում մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված լինելու պայմանը նախատեսված չէ:

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնանք Սահմանադրության 78-րդ հոդվածով երաշխավորված համաչափության սկզբունքին, համաձայն որի՝ *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

Սահմանադրական դատարանը 2014 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-1148 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը:»:

Անդրադառնալով նաև մարդու իրավունքների սահմանափակման հնարավորությանը, Սահմանադրական դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 4-ի

ՄԴՈ–649 որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «... Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը)»:

Սահմանադրական դատարանը, 2007 թվականի փետրվարի 7-ի ՄԴՈ–677 որոշման մեջ անդրադառնալով համաչափության սկզբունքին, արձանագրել է հետևյալը. «Սահմանադրության 43 հոդվածի 1–ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:

2015 թվականի դեկտեմբերի 08-ի ՄԴՈ–1244 որոշման մեջ արձանագրվել է հետևյալ դիրքորոշումը. «...Հետևաբար, օրենսդիրը պարտավոր է նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որոնք բացառեն անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների որևէ սահմանափակում, եթե այն պայմանավորված չէ Սահմանադրությամբ թույլատրելի հանգամանքներով: Այլ կերպ, եթե որևէ իրավակարգավորման շրջանակներում խախտվում է այդ պահանջը, ապա այն դադարում է իրավական և սոցիալական, հետևաբար՝ նաև սահմանադրական լինելուց, իսկ օրենքով համապատասխան երաշխիքների (կանոնակարգման) բացակայությամբ էլ՝ պայմաններ են ստեղծվում հակասահմանադրական իրավիճակի առաջացման համար: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին»:

Եվ վերջապես, անդրադառնանք վիճարկվող դրույթի օրինաչափությանը սեփականության իրավունքի լույսի ներքո:

Գործող կարգավորմամբ մաքսային ծառայության քննիչի պաշտոն զբաղեցրած անձին, ով ծառայությունից ազատվել է անձնական դիմումի հիման վրա, հարկային ծառայության քննիչի պաշտոն զբաղեցրած անձին, ում լիազորությունները դադարել են անձնական դիմումի հիման վրա և հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձին, ում լիազորությունները դադարել են անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա կենսաթոշակ նշանակվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով, և ըստ էության, եթե 9-րդ հոդվածի 3-րդ մասով հաշվարկված և նշանակված կենսաթոշակի չափը (որը ենթակա չէ փոփոխման, ինչպես ՔնԿոմՕր 56-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող կենսաթոշակը), առավել նվազ է քան նույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող կենսաթոշակի չափը, ապա կենսաթոշակը հաշվարկվում և վճարվում է օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով (կենսաթոշակի բնականոն աճ նախատեսվում է), մինչդեռ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնից ազատված ծառայողին, ում լիազորությունները դադարեցվել են իր գրավոր դիմումի հիման վրա, կենսաթոշակ նշանակվում է ՔնԿոմՕր 56-րդ հոդվածով սահմանված կարգով, որի արդյունքում կենսաթոշակի չափը ենթակա չէ փոփոխման և վերահաշվարկման: Այսինքն՝ օրենսդիրը միևնույն հիմքով պաշտոնական լիազորությունները դադարած հարկային ծառայության, մաքսային ծառայության քննիչներին և հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձին (ներառյալ քննիչները) առավել բարենպաստ պայմաններով կենսաթոշակի իրավունք է վերապահել՝ ի տարբերություն քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնից ազատված ծառայողի (ներառյալ քննիչները), որոնց սոցիալական ապահովության պայմաններն էականորեն և անհամեմատ նվազ են: Նշված մոտեցումը չի բխում սահմանադրորեն երաշխավորված համաչափության սկզբունքից, չի համապատասխանում Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ չէ դրանց հասնելու համար: Իրեն սոցիալական և իրավական հոչական պետությունը պարտավոր է ապահովել իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները, ապահովի անձանց

սոցիալական ապահովության իրավունքի իրացումը և բացառի ցանկացած տեսակի խտրականություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (տե՛ս, օրինակ, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44): ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը, իսկ 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Անդրադառնանք Սահմանադրական դատարանի կողմից 2011 թվականի հոկտեմբերի 11-ի ՄԴՈ-991 որոշմանը, որում տեղ է գտել հետևյալ դիրքորոշումը. «7. Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ կենսաթոշակը և աշխատանքը միտված են միևնույն նպատակին՝ գոյության միջոցների ապահովմանը, աշխատանքը՝ որպես կենսաապահովման միջոց, գործում է անձի լրիվ աշխատունակության պայմաններում, իսկ կենսաթոշակը՝ աշխատունակության սահմանափակման կամ կորստի պայմաններում: Հետևաբար, կենսաթոշակի իրավունքը ծագում է այն ժամանակ, երբ անձը, որոշակի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, այլևս չի կարող այդ նպատակն իրացնել աշխատանքի միջոցով: Կենսաթոշակի իրավունքի ծագումն անմիջականորեն պայմանավորվում է աշխատանքի իրավունքի իրացման հնարավորությունների կրճատմամբ:»:

Որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման՝ պետության պարտականությունն է երաշխավորելու անձանց իրավունքների և ազատությունների համալիր իրացումը: Իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման: Ուստի, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնք անհարկի չեն սահմանափակի անձանց՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքները, չեն ստեղծի անպիսի իրավիճակներ, որոնք յուրաքանչյուր անգամ

կատիպեն անձին դիմել դատարան՝ իր խախտված իրավունքների վերականգնման լեգիտիմ ակնկալիքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, կարծում ենք, որ վիճարկվող դրույթների բովանակությունը գործող կարգավորմամբ չի բխում Սահմանադրության 28-րդ, 29-րդ, 60-րդ և 78-րդ հոդվածների պահանջներից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի՝ այնքանով, որքանով չի ներառում «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքերով քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնից ազատված անձին և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի՝ այնքանով, որքանով կենսաթոշակի բնականոն աճ չի նախատեսում, համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝ **X** Lyudvik Davtyan *Լյուդվիկ Դավթյան*

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169